# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 1. | **Անունը, ազգանունը:** Քրիստինե Ասատրյան |
| 2. | **Զբաղեցրած պաշտոնը:** ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ |
| 3. | **Գործուղման վայրը և ժամկետները:** Ղազախստանի Հանրապետություն, Աստանա, 19-20 հոկտեմբեր |
| 4. | **Հրավիրող կողմը: UNFPA** |
| 5. | **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը):** Գործուղման նպատակն է մասնակցել <<Ներդրումներ երիտասարդության շրջանում>> միջազգային կոնֆերանսին: |
| 6. | **Քննարկված թեմաները:** Կրթություն, երիտասարդական մասնակցություն, առողջություն և երիտասարդության ռիսկերն ու հնարավորությունները Գլոբալիզացիայի պայմաններում |
| 7. | **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը:**<br>Այս տարվա հոկտեմբերի 19-20-ը մասնակցել եմ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացած Investing in youth միջազգային կոնֆերանսին: Կոնֆերանսի ընթացքում հանդես եմ եկել ելույթով, որում անդրադարձել եմ երիտասարդների և կանանց ներգրավվածությանը որոշումների կայացման գործում: Ելույթում առանձին ներկայացրել եմ նաև Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած ,Թավշյա հեղափոխության ընթացքում երիտասարդների ունեցած դերը և մասնակցությունը: Ելույթումս հատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանում տեղի ունեցած հեղափոխության արդյունքում երիտասարդության շրջանում հիմնավորված արժեքների ամրապնդման անհրաժեշտությանը, ինչպես երիտասարդական քաղաքականության հարցում հայաստանյան իշխանությունների մոտուցմներին:<br><br>Միջազգային կոնֆերանսի շրջանակներում նաև մասնակցել եմ երիտասարդական հիմնախնդիրների վերաբերյալ պանել քննարկմանը: Անհրաժեշտ եմ համարում նշել, որ համագործակցության վերաբերյալ բանավոր պայմանավորվածություններ են ձեռք բերվել UNFPA-ի տարածաշրջանային գրասենյակի, UNDP-ի և APDP-ի հետ:<br><br>Գործընկերային կապեր եմ հաստատել Ղազախստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և |

| | |
|---|---|
| | Մալազիայի երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուների հետ: Համագործակցության հնարավոր ուղղությունները քննարկվելու են ավելի ուշ |
| 8. | **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:** Չկան |
| 9. | **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:** Չկան |
| 10. | **Գործուղվողը:** Քրիստինե Ասատրյան |
| 11. | **Ստորագրությունը, ամսաթիվը.** 22.10.2018 |